

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

«20» փետրվարի 2013 թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ/ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կանոնակարգը ընդունվում է «ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության 3-րդ աստիճանում կրեդիտային համակարգի ներդրման մասին» օրենքի 21.07.2010թ. «ՀՀ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» 5-րդ հոդվածի 7-րդ կետին, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հուլիսի 21-ի N1167-Ն հրամանը և դրան կից հավելվածի «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ուղեցույցին համապատասխան:
- 1.2. Ասպիրանտը բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձ է, որը սովորում է ասպիրանտուրայում՝ տեսական մասնագիտական գիտելիքները խորացնելու և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն պատրաստելու, իսկ *հետազոտողի* (ասպիրանտի/հայցորդի) հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի առկայության դեպքում՝ նաև համապատասխան որակավորման աստիճան ստանալու համար:
- 1.3. Հայցորդը բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձ է, որը բուհին կամ կազմակերպությանը կից պատրաստում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն:
- 1.4. Սույնով սահմանվում է ԳՊՄԻ-ում ասպիրանտուրայի և հայցորդության ընդունելության և ուսուցման կանոնակարգը:

2. ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ/ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- 2.1. ԳՊՄԻ-ի ասպիրանտներ/ հայցորդներ կարող են լինել բարձրագույն կրթություն /մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան/ ունեցող անձինք:
- 2.2. Առկա ուսուցմամբ ասպիրանտին հատկացվող առավելագույն ժամկետը 3 տարի է, հետակա ուսուցմամբ ասպիրանտին՝ 4 տարի, հայցորդին՝ 5 տարի, որի ընթացքում հետազոտողը պարտավոր է մասնակցել ուսումնական պլանով նախատեսված դասընթացներին և հավաքել համապատասխան կրեդիտներ:
- 2.3. Միաժամանակ երկու և ավելի բուհերում կամ կազմակերպություններում հետազոտող ձևակերպվել չի թույլատրվում: Ասպիրանտական ուսուցման, ինչպես նաև հայցորդի կարգավիճակով ուսումնառության լրիվ ժամկետն անցած անձինք երկրորդ անգամ չեն կարող օգտվել նույն մասնագիտությամբ ասպիրանտ/հայցորդ ձևակերպվելու իրավունքից:
- 2.4. Ասպիրանտի ընդունելությունը և հրամանագրումը կատարվում է ռեկտորի հրամանով՝ ըստ ասպիրանտուրայի ընդունելության քննությունների կանոնակարգի:
- 2.5. Հայցորդների ձևակերպումը կատարվում է տարեկան մեկ անգամ՝ հոկտեմբերի 20-ից նոյեմբերի 20-ը, ԳՊՄԻ-ի ռեկտորի հրամանով՝ ըստ ասպիրանտուրայի բաժնի ներկայացրած փաստաթղթերի և համապատասխան ամբիոնի եզրակացության:
- 2.6. Հայցորդից պահանջվում է համապատասխան փաստաթղթերի փաթեթ /Հավելված 1/:
- 2.7. Ասպիրանտից պահանջվում է համապատասխան փաստաթղթերի փաթեթ /Հավելված 2/:

3. ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ/ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- 3.1. Ասպիրանտների և հայցորդների ուսուցումը ներառում է հետազոտողի կրթական ծրագիրը:
- 3.2. Հետազոտողի կրթական ծրագիրը բաղկացած է երկու հիմնական կառուցամասերից (տե՛ս Հավելված 3՝ «Հետբուհական կրթության ուսումնահետազոտական ծրագրի ուսումնական պլանը»)՝ 1) կրթական կառուցամաս (ընդհանուր ու մասնագիտական, պարտադիր ու ընտրովի դասընթացներ և կրթական մոդուլներ), 2) հետազոտական կառուցամաս (ինքնուրույն հետազոտական աշխատանք, ատենախոսության կատարում): Կառուցամասերից յուրաքանչյուրով, ըստ ուսումնական տարիների նախատեսված աշխատածավալների բաշխման օրինակելի տարբերակները ներկայացված են Հավելվածներ 4,5,6-ում:
- 3.3. Հետազոտողի կրթական ծրագրի լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի (կամ 180 կրեդիտ x 30 ժամ = 5400 կրեդիտ/ժամ՝ ներառյալ լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքները):
- 3.4. Հետազոտողի ծրագրի կրթական կառուցամասը կազմում է 45 կրեդիտ կամ 1350 կրեդիտ/ժամ լրիվ ուսումնական բեռնվածություն, որը ներառում է ընդհանուր և

մասնագիտական ընտրովի և պարտադիր դասընթացներ և այլ կրթական մոդուլներ, ներառյալ որակավորման քննությունները և ստուգաբքը, մանկավարժական և հետազոտական պրակտիկաները և այլն:

- 3.5. Հետազոտողի ծրագրի հետազոտական կառուցամասը (ինքնուրույն հետազոտական աշխատանք, թեկնածուական ատենախոսության կատարում, եզրափակիչ ատեստավորում՝ հրապարակային պաշտպանության տեսքով) կազմում է 135 կրեդիտ կամ 4050 կրեդիտ/ժամ:
- 3.6. Հետբուհական կրթության ուսումնահետազոտական ծրագիրն ունի իր մասնագիրը՝ ուսումնական պլանով և առարկայական նկարագրերով: Նրա առանձին բաղադրիչները մշակվում են ինստիտուտի համապատասխան ամբիոններում, վերջնական տարբերակները՝ ինստիտուտի գիտության և արտաքին կապերի բաժնում և հաստատվում են ինստիտուտի գիտական խորհրդի կողմից:
- 3.7. Ասպիրանտը/հայցորդը պարտավոր է 10 օրվա ընթացքում գիտական ղեկավարի հետ համատեղ կազմել «Ասպիրանտի/հայցորդի ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանը» և լրացնել «Հետբուհական կրթական ծրագրի անհատական ձևաթերթը», որոնցում արտացոլվում են հետազոտողի կրթական ծրագիրը, կրթական և հետազոտական կառուցամասերի բոլոր բաղադրիչները:
- 3.8. Պաշտոնական հրահանգումից անմիջապես հետո յուրաքանչյուր ամբիոն ամեն մի հետազոտողի համար հաստատում է աշխատանքների անհատական պլանը և ձևաթերթը (վերջինս, ըստ անհրաժեշտության, կարող է ենթարկվել փոփոխության): Այս փաստաթղթերը ԳՊՄԻ-ի գիտության և արտաքին կապերի բաժնում հաստատվելուց հետո պահվում են ասպիրանտուրայի բաժնում՝ հետազոտողի անհատական թղթապանակում:
- 3.9. Ըստ ուսումնական տարիների և կիսամյակների՝ ձևաթերթում նշվում են կրթական և հետազոտական կառուցամասերը կազմող մոդուլները, դասընթացների ցանկը՝ դրանց հատկացրած կրեդիտներով:
- 3.10. Հետազոտողի կրթական ծրագրի անհատական ձևաթերթը բազկացած է առկա համակարգի ասպիրանտի համար 6 մասից՝ համապատասխան կիսամյակներին, հեռակա համակարգի ասպիրանտների համար՝ 8 մասից և հայցորդների համար՝ 10 մասից:
- 3.11. Յուրաքանչյուր կիսամյակի տևողությունը կազմում է 4 շաբաթ և կազմակերպվում է հունվար-փետրվար և հունիս-հուլիս ժամանակահատվածներում:
- 3.12. Առկա բաժնի ասպիրանտը յուրաքանչյուր ուսումնական տարում պետք է կուտակի 60 կրեդիտ, աշխատելով համապատասխան ուսումնական և հետազոտական բեռնվածությամբ, հեռակա բաժնի ասպիրանտը՝ 45, իսկ հայցորդը՝ 36 կրեդիտ /20% թույլատրելի շեղումով/:
- 3.13. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին /առաջին երկու շաբաթվա ընթացքում/ հետազոտողի և նրա գիտական ղեկավարի նախաձեռնությամբ և ամբիոնի համաձայնությամբ հնարավոր են ձևաթերթի փոփոխություններ, որոնք պետք է գրանցվեն ձևաթերթում:
- 3.14. Ասպիրանտուրայի բաժնում հետազոտողի աշխատանքային անհատական պլանի և ձևաթերթի առկայության դեպքում հետազոտողը մասնակցում է հետբուհական

կրթության ուսումնահետազոտական ծրագրի ուսումնական պլանով սահմանված դասընթացներին՝ կուտակելով սահմանված կրեդիտները:

- 3.15.** Յուրաքանչյուր կիսամյակում ուսումնական պլանով նախատեսված ստուգաք-քննությունների անցկացումը կատարվում է համապատասխան ամբիոնի դասընթացը վարող դասախոսի կողմից (եթե առարկան ընդհանուր բնույթի է և վերաբերվում է բոլոր մասնագիտությունների ասպիրանտներին/ հայցորդներին), իսկ մասնագիտական (այդ թվում նաև ընտրովի) առարկաների դեպքում՝ ստուգաք-քննությունները անցկացվում են առանձին ամբիոններում, արդյունքները հաստատելով միևնույն ամփոփաթերթում:
- 3.16.** Կրթական ծրագրով նախատեսված ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքը, գիտական սեմինարներին և աշխատաժաղովներին մասնակցությունը և պրակտիկաները գնահատվում են ամբիոնի կողմից:
- 3.17.** Եթե ասպիրանտը/հայցորդը նախկինում հետբուհական կրթական ծրագրի շրջականում ուսումնասիրել է որևէ առարկա և դրա դիմաց ստացել իրավաբանորեն հաստատելի համապատասխան կրեդիտներ, ապա այդ առարկան համարվում է ուսումնասիրված՝ իր համապատասխան կրեդիտներով:
- 3.18.** Ամբիոնը ամեն մի հետազոտողի համար յուրաքանչյուր տարեվերջի կազմակերպում է ատեստավորման գործընթաց, որով հաստատում է տվյալ կիսամյակում սահմանված աշխատանքների կատարումը և կրեդիտների հավաքումը, թեկնածուական ատենախոսության վրա կատարած աշխատանքների ծավալը՝ ըստ հետազոտողի անհատական պլանի և ձևաթերթի:
- Ատեստավորման արդյունքները (թե դրական, թե բացասական) քննարկվում են ամբիոնի նիստում և արձանագրվում: Արձանագրության քաղվածքը ներկայացվում է ինստիտուտի ասպիրանտուրայի բաժին:
- Ատեստավորման բացասական արդյունքների դեպքում ԳՊՄԻ-ի գիտության և արտաքին կապերի բաժինը, ասպիրանտուրայի բաժինը և համապատասխան ամբիոնը նախատեսում է հատուկ միջոցառումներ որոշակի ժամանակահատվածի համար տվյալ հետազոտողին լրացուցիչ ատեստավորման հնարավորություն ընձեռելու նպատակով:
- 3.19.** Հարգելի պատճառներով /համապատասխան փաստաթղթի առկայության դեպքում/ դասընթացին (կամ դասընթացներին) չհաճախելու դեպքում հետազոտողն ունի 2-րդ հնարավորություն՝ ստանալու համապատասխան կրեդիտը հաջորդ անգամ կազմակերպվող նույն դասընթացի (կամ դասընթացների) կազմակերպման ժամանակ: Եթե դասընթացի (կամ դասընթացների) կազմակերպման նոր ժամանակահատվածում հետազոտողը չի կարողանում կուտակել համապատասխան կրեդիտներ, ապա ամբիոնի կողմից իրականացվող տարեկան ատեստավորման արդյունքների հիման վրա հետազոտողը ներկայացվում է հեռացման:
- 3.20.** Հետազոտողի որակավորման աստիճան շնորհվում է մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց՝ ասպիրանտական կամ հայցորդական համակարգում հետազոտողի կրթական ծրագրի ատեստավորման վերջնական արդյունքների հիման վրա: Հետազոտողի կրթական ծրագրով ուսուցման համակարգում ամփոփիչ ատեստավորման նպատակը ամբիոնի կողմից (ըստ անհրաժեշտության՝ համապատասխան մասնագետներ ներգրավելու միջոցով)

ասպիրանտին/հայցորդին հետազոտողի որակավորման աստիճան շնորհելն ու ատենախոսությունը պաշտպանության ներկայացնելուն երաշխավորելն է:

4. ՀԵՏԱԳՈՏՈՂԻ ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

- 4.1. Հետազոտողի ծրագրի կրթական կառուցամասը, կազմում է 45 կրեդիտ և ունի չորս հիմնական բաղադրիչներ.
- 4.1.1. *Մասնագիտական գիտելիքների և կարողությունների ուսուցում*՝ գիտության և տեխնոլոգիաների մեկ կամ մեկից ավելի փոխկապակցված (միջմասնագիտական) ուղղություններով: Մասնագիտական կրթամասի կրեդիտները կազմում են կրթական բաղկացուցչի կրեդիտների 1/3-ը:
- 4.1.2. *Ընդհանուր բազային հետազոտական կարողությունների ուսուցում*՝ հետազոտական մեթոդներ և եղանակներ, հետազոտությունների կառավարում, վերլուծություն, խնդիրներ ձևակերպելու և լուծելու կարողություններ, գիտական գրագրություն և աշխատանքների ձևակերպում, ակադեմիական գրագրություն օտար լեզուներով, գիտական էթիկայի կանոնների և մտավոր սեփականության իրավունքի իմացություն ուղղություններով: Ընդհանուր բազային կրթամասի կրեդիտները կազմում են կրթական բաղկացուցչի կրեդիտների 1/3-ը:
- 4.1.3. *Կառավարման և հաղորդակցման կարողությունների ձևավորում*՝ գրավոր բանավոր հաղորդակցության կարողություններ, աշխատանք գիտական թիմերում և ցանցերում, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարման և դեկավարման հմտություններ, ժամանակի կառավարում (time management), կարիերայի կառավարում՝ ներառյալ աշխատանքի որոնման հմտություններ ուղղություններով:
- 4.1.4. *Դասավանդման գիտամանկավարժական մեթոդների ուսուցում*՝ համապատասխան հմտությունների զարգացմամբ:
- 4.2. Հետազոտողի ծրագրի կրթական կառուցամասում առանձնացվում են հետևյալ ուսումնական հետազոտական մոդուլները՝ հումանիտար, ընդհանուր և մասնագիտական, պրակտիկաների և ատեստավորումների:
- 4.2.1. *Հումանիտար և ընդհանուր պատրաստվածության կրթամասերում* ընդգրկված դասընթացների (առարկաների) նպատակն է հետազոտողի համար ապահովել անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ՝ անկախ հետազոտողի մասնագիտացումից:
- 4.2.2. *Մասնագիտական պատրաստվածության մոդուլները* ապահովում են հետազոտողներին անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը:
- 4.2.3. *Պրակտիկաներն* (մանկավարժական, հետազոտական) ապահովում են հետազոտողի մանկավարժական և հետազոտական հմտությունների զարգացումը: Պրակտիկաները կազմակերպվում են հայցորդի և գիտական

ղեկավարի կողմից համատեղ կազմված և ամբիոնի կողմից հաստատված ծրագրերով:

- Հետազոտողի *մանկավարժական պրակտիկայի* նպատակն է դասավանդման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների յուրացումը: Մանկավարժական պրակտիկան իրականացվում է բակալավրի մակարդակում՝ 10 շաբաթ տևողությամբ:
- Հետազոտողի մանկավարժական պրակտիկան ներառում է մասնագիտական առարկաների գործնական, սեմինար, լաբորատոր աշխատանքների իրականացում, ինչպես նաև անհատական աշխատանքների ղեկավարում:
- Հետազոտողի համապատասխան մասնագիտությամբ աշխատելու դեպքում մանկավարժական պրակտիկան համարվում է իրականացված, եթե առկա են համապատասխան փաստաթղթեր:
- *Հետազոտական պրակտիկայի* նպատակն է հայցորդի մասնագիտական գիտելիքների հարստացումն ու ամրապնդումը, ինքնուրույն գիտական աշխատանքի կատարման, հետազոտությունների ու փորձերի իրականացման ունակությունների ձևավորումը:
- Հետազոտական պրակտիկան անցկացվում է ուսումնառության երկրորդ տարվա ընթացքում, 10 շաբաթ տևողությամբ: Այն կազմակերպվում է ԳՊՄԻ-ում, ինչպես նաև այլ բուհերում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և գիտահետազոտական կազմակերպություններում:

5. ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԾՐԱԳՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

- 5.1. Հետազոտական կառուցամասում, որը հետազոտողի կրթական ծրագրում կազմում է 135 կրեդիտ, ընդգրկված են հետևյալ բաղադրիչները՝ *մասնակցություն գիտական սեմինարներին և գիտաժողովներին, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք, ատենախոսության պատրաստում և եզրափակիչ ատեստավորում՝ հրապարակային պաշտպանության տեսքով:*
- 5.2. Գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական աջակցությունը ապահովվում է մասնագիտական ամբիոնի կողմից կազմակերպվող գիտական սեմինարների միջոցով, որոնք ձևավորում են գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու ունակություններ և հմտություններ:
- 5.3. Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը կազմվում է գիտական ղեկավարի հետ՝ ելնելով թեկնածուական ատենախոսության խնդիրներից և հաստատվում է ամբիոնի նիստի ժամանակ: Հետազոտական աշխատանքի ընթացքում հետազոտողը պատրաստում և հրատարակում է գիտական աշխատանքներ ըստ ԲՈՀ-ի սահմանած կարգի:

6. ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

- 6.1. Ասպիրանտը/հայցորդը յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին համապատասխան ամբիոնի քննարկմանն է ներկայացնում ամենամյա հաշվետվություն՝ կատարած ուսումնական և հետազոտական աշխատանքների վերաբերյալ:
- 6.2. Ասպիրանտի/հայցորդի տարեկան ատեստավորման և հաջորդ կուրս փոխադրման համար հիմք է ծառայում նրա հաշվետվությունում տարեկան ուսումնագիտական բեռնվածության կատարողականը և ուսումնական ծրագրերով կրթական և հետազոտական կառուցամասերի համար նախատեսված տարեկան գումարային կրեդիտների (մինչև 20% թույլատրելի շեղումով) կուտակումը:
- 6.3. Ասպիրանտի/ հայցորդի հաշվետվությունը քննարկելուց հետո ամբիոնը 3 օրվա ընթացքում ասպիրանտուրայի բաժին են ներկայացնում ատեստավորման արդյունքները:
- 6.4. Ոչ մասնագիտական մոդուլից 60 միավորից ցածր, իսկ մասնագիտական մոդուլից 81 միավորից ցածր միավոր ստանալու դեպքում ասպիրանտը/հայցորդը կրեդիտ չի ստանում:
- 6.5. Ասպիրանտը/հայցորդը անցնում է ամփոփիչ ատեստավորում, եթե կուտակել է կրթական և հետազոտական կառուցամասերին հատկացված 180 կրեդիտից 175-ը (5 կրեդիտ հատկացվում է եզրափակիչ ատեստավորմանը), «գերազանց» կամ «լավ» գնահատականներով հանձնել է մասնագիտական որակավորման քննությունները, պատրաստել և ամբիոնի քննարկմանն է ներկայացրել ատենախոսությունը:
- 6.6. Ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ ամբիոնի նիստի եզրակացությունը 3 օրվա ընթացքում ներկայացվում է ասպիրանտուրայի բաժին:
- 6.7. Ամփոփիչ ատեստավորման դրական արդյունքների հիման վրա պետական որակավորման հանձնաժողովի կողմից ասպիրանտին/հայցորդին շնորհվում է *հետազոտողի որակավորման աստիճան*:
- 6.8. Տարեկան կամ ամփոփիչ ատեստավորում չանցած հետազոտողները ինստիտուտի ռեկտորի հրամանով զրկվում են ասպիրանտի/հայցորդի կարգավիճակից:

7. ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

- 7.1. Ասպիրանտի/հայցորդի գիտելիքների գնահատում կատարվում է ըստ ԳՊՄԻ-ում գործող գիտելիքների գնահատման համակարգի: Կրթական ծրագրերի յուրացման արդյունքում հետազոտողի ձեռք բերած գիտելիքների տարբերակված գնահատման սանդղակը բերված է Հավելված 7-ում:
 - 7.1.1. Գիտելիքները գնահատվում են 3 գործոնով՝ հաճախումներ (10%), անհատական աշխատանք (20%) և քննություն կամ ստուգարք (70%):
 - 7.1.2. Կրթական կառուցամասի ընդհանուր պատրաստվածության պարտադիր առարկաների անցումային շեմ ընդունված է 60 միավորը, իսկ մասնագիտական

պատրաստվածության պարտադիր կամ կամընտրական առարկաներինը՝ 80 միավորը:

- 7.1.3. Մանկավարժական և հետազոտական պրակտիկաներին հատկացվում է 2-ական կրեդիտ: Պրակտիկաների գնահատման գործոնները և կշիռները բերված են Հավելված 7-ում:

8. ԱՍՊԻՐԱՆՏԻՆ/ՀԱՅՑՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՑԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

- 8.1. Մինչ սույն կանոնակարգի հաստատումը ձևակերպված ասպիրանտներին/հայցորդներին թույլատրվում է մինչև 2013թ-ի դեկտեմբերի 31-ը պաշտպանել ատենախոսությունը հին կանոնակարգով: 2014թ-ի հունվարի 1-ից գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար հետազոտողի դիպլոմի առկայությունը պարտադիր է՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարի գրության (06.07.2011թ.):
- 8.2. Ասպիրանտը/հայցորդը հանձնում է որակավորման քննություններ՝ համաձայն ՀՀ ԲՈՀ-ի «Ատենախոսության պաշտպանության համար անհրաժեշտ որակավորման քննությունների հանձնման կարգի»:

9. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 9.1. Սույն Կանոնակարգը կիրառվում է ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի կողմից հաստատման օրվանից:

**ՀԱՅՑՈՐԴ ԶԵՎԱԿԵՐՊՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

1. Բարձրագույն կրթության դիպլոմի և ներդիրի իրավաբանորեն հաստատված պատճենները
2. Որակավորման քննությունների հանձնման մասին տեղեկանք /եթե դրանք հանձնված են/:
3. Հրատարակված գիտական աշխատությունների, հայտնագործությունների, գյուտերի և իրականացված գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ հաշվետվության ցանկը /առկայության դեպքում/:
4. Ընտրված մասնագիտությունից գիտական ռեֆերատ՝ համապատասխան ամբիոնի կողմից դրական գրախոսականով (3. պահանջի բացակայության դեպքում):
5. Հայցորդի ատենախոսության թեման (նշելով գիտական ուղղվածության դասիչը) և գիտական ղեկավարման վերաբերյալ ղեկավարի գրավոր համաձայնությունը:
6. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ:
7. Ինքնակենսագրություն:
8. Երեք լուսանկար՝ 3/4 չափի:
9. Քաղվածք՝ համապատասխան ամբիոնի նիստի արձանագրությունից՝ եզրակացություն-երաշխավորությամբ (կցելով առկա գիտական հոդվածների, գյուտերի կամ հայտնագործությունների նյութերը):
10. Աշխատանքային գրքույկի պատճենը, որը վավերացվում է աշխատավայրում /եթե դիմողն աշխատում է/:
11. Անձնագրի և սոցիալական քարտի պատճենները: Գործերը հանձնելիս ներկայացնել նաև անձնագիրը:
12. Դիմում ԳՊՄԻ-ի ռեկտորի անունով:

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Բարձրագույն կրթության դիպլոմի և ներդիրի իրավաբանորեն հաստատված պատճենները:
2. Հրապարակված գիտական աշխատանքների ցանկը և նրանց պատճենները, գյուտերի և հայտնագործությունների վկայագրերի պատճենները (առկայության դեպքում):
3. Ընտրված մասնագիտությունից գիտական ռեֆերատ (ըստ հայտարարված մրցույթի)՝ համապատասխան ամբիոնի կողմից դրական գրախոսականով:
4. Վկայագիր օտար լեզվի տարբերակված քննության և «Ինֆորմատիկայի ու համակարգչից օգտվելու հիմունքների» ստուգարքի արդյունքների մասին (առաջնորդվելով ՀՀ ԿԳ նախարարի 30 նոյեմբերի 2010 թվականի N 1660-Ա/Ք հրամանով):
5. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ:
6. Ինքնակենսագրություն:
7. Երեք լուսանկար՝ 3/4 չափի:
8. Աշխատանքային գրքույկի պատճենը, որը վավերացվում է աշխատավայրում /եթե դիմողն աշխատում է/:
9. Անձնագրի և սոցիալական քարտի պատճենները: Գործերը հանձնելիս ներկայացնել նաև անձնագիրը:
10. Դիմում ԳՊՄԻ-ի ռեկտորի անունով:

Հաստատում եմ՝				Հավելված 3
ԳՊՄԻ ռեկտոր՝	Վ. Գրիգորյան			
20 փետրվարի 2013 թ.				

ԳՊՄԻ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

N	Ուսումնական հետազոտական մոդուլներ	Կրեդիտներ	Ժամաքանակ	Կատարող	Լրացուցիչ տեղեկություններ
	Ընդհանուր կրեդիտներ և ժամաքանակ	180	5400		
1	2	3	4	5	6
	ԿՐԹԱԿԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ	45	1350		
	ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԿՐԹԱՄԱՍ	13	390		
1	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)	2	60	օտար լեզ. ամբիոններ	
2	Գիտական թարգմանության տեսական և պրակտիկ հարցեր	2	60	ռուս. լեզվի ամբիոն	
3	Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն	2	60	փիլիսոփ. ամբիոն	
4	Համեմատական մանկավարժություն	2	60	մանկ. ամբիոն	
5	Կրթության հոգեբանություն	2	60	հոգեբ. ամբիոն	
6	Ակադեմիական գրագրություն օտար լեզուներով	2	60	օտար լեզ. ամբիոններ	
7	Գործարար գրագրություն և հաղորդակցման կարողություններ	1	30	հայոց լ. ամբիոն	
	Գիտական գրագրություն և աշխատանքների ձևակերպում			հայոց լ. ամբիոն	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՄԱՍ	8	240		
1	Mathematica կոմպյուտրային համակարգը	2	60	բարձր. մաթ. և մաթ. դաս. մեթոդիկա	
2	Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և գործիքակազմ	1	30		
	Հետազոտական աշխատանքների կազմակերպում			հայոց լ. ամբիոն	
3	Նախագծերի մշակում և կառավարում	1	30	տնտ. ամբիոն	

4	Գարիերայի կառավարում և աշխատանքի որոնման մեթոդներ	1	30	տնտ. ամբիոն	
	Մարդկային և նյութական ռեսուրսների կառավ. և ղեկավարում			տնտ. ամբիոն	
5	Ինտելեկտուալ սեփականության իրավունք և պատենտագիտություն	1	30	պատմ. և իրավ. ամբիոն	
6	Համակարգչից օգտվելու հմտություններ	2	60	ինֆորմ. ամբիոն	
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՄԱՍ		15	450		
1	Մասնագիտական պարտադիր դասընթաց – 1	3	90	մասնագիտ. ամբիոններ	
2	Մասնագիտական պարտադիր դասընթաց – 2	3	90		
3	Մասնագիտական պարտադիր դասընթաց – 3	3	90		
4	Մասնագիտական ընտրովի դասընթաց – 1	3	90		
5	Մասնագիտական ընտրովի դասընթաց – 2				
6	Մասնագիտական ընտրովի դասընթաց – 3	3	90		
7	Մասնագիտական ընտրովի դասընթաց – 4				
ՊՐԱԿՏԻԿԱԼԵՐ		4	120		
1	Մանկավարժական պրակտիկա	2	60	մասնագիտ. ամբիոններ	
2	Հետազոտական պրակտիկա	2	60		
ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄՆԵՐ		5	150		
1	Որակավորման քննություն փիլիսոփայությունից	1	30		
2	Որակավորման քննություն օտար լեզվից	1	30		
3	Որակավորման ստուգարք ինֆորմատիկայից	1	30		
4	Որակավորման քննություն մասնագիտությունից (առնվազն 2 քնն.)	2	60		
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		135	4050		
1	Գիտական սեմինարներ և աշխատաժողովներ	10	300		
2	Գիտահետազոտական աշխատանք և ատենախոսության կատարում	120	3600		
3	Եզրափակիչ ատեստավորում	5	150		
Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ՝				Ա. Մարգարյան	

Հաստատում էմ՝												Հավելված 4
ԳՊՄԻ ռեկտոր՝	Վ. Գրիգորյան											
20 փետրվարի 2013 թ.												

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՌԿԱ ԱՄՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

N	Առարկայի անվանումը	Կրեդիտներ	Կրեդիտ - ժամեր	Լսարանային ժամեր	Դասախոսություն	Գործնական	Մեմինար պարասպմունքներ	Լսարանատր աշխատանք	Անհատական աշխատանք	Ստուգարք	Քննություն	Մագատարկող ամբիոն	Նշումներ
1	Օտար լեզու	1	30	14		14			2	2		անգլ, ֆր. և գերմ	
2	Գիտական թարգմանության տեսական և պրակտիկ հարցեր	1	30	14	6	8			2	2		ռուս. լ.	
3	Համեմատական մանկավարժություն	1	30	14	6	4	4		2		2	մանկ	
4	Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և գործիքակազմ	1	30	14	6	8			2		2	հ.լ.	
	Հետազոտական աշխատանքների կազմակերպում				6	8			2	2	հ.լ.		
5	Գիտական գրագրություն և աշխատանքների ձևակերպում (ընտրովի)	1	30	14	6	8			2		2	հ.լ.	
	Գործարար գրագրություն և հաղորդակցման կարողություններ (ընտրովի)				6	8			2	2	հ.լ.		
6	Մասնագ. պարտադիր դասընթաց – 1	3	90	30					2		2	մասն.	
	Ընդամենը կիսամյակային կրեդիտներ	8											
	2-րդ կիսամյակ												
1	Օտար լեզու	1	30	14		14			2		2	անգլ, ֆր. և գերմ	
2	Համեմատական մանկավարժություն	1	30	14	6	4	4		2		2	մանկ	
3	Գիտական թարգմանության տեսական և պրակտիկ հարցեր	1	30	14	6	8			2		2	ռուս. լ.	
4	Կարիերայի կառավ. և աշխատանքի որոնման մեթոդներ (ընտրովի)	1	30	14	6	8			2		2	տնտ.	
	Մարդկային և նյութական ռեսուրսների կառավ. և ղեկ. (ընտրովի)				6	8			2	2	տնտ.		
5	Մասնագ. պարտադիր դասընթաց – 2	3	90	30					2		2	մասն.	
6	Մասնագ. ընտրովի դասընթաց-1	3	90	30					2	2		մասն.	
7	Մասնագ. ընտրովի դասընթաց-2									2	2		
	Ընդամենը կիսամյակային կրեդիտներ	10											

3-րդ կիսամյակ											
1	Ակադեմիական գրագրություն օտար լեզուներով	1	30	14		14			2	2	անգլ. ֆր. և գերմ
2	Կրթության հոգեբանություն	1	30	14	6		8		2	2	հոգ.
3	Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն	1	30	14	6		8		2	2	փիլ.
4	Ինտելեկտուալ սեփականության իրավունք և պատենազիտություն	1	30	14	6		8		2	2	պատւ. և իրավ.
5	Մասնագ. պարտադիր դասընթաց – 3	3	90	30					2		մասն.
6	Մանկավարժական պրակտիկա	2									
7	Որակավորման քննություն օտար լեզվից	1									
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		10									
4-րդ կիսամյակ											
1	Ակադեմիական գրագրություն օտար լեզուներով	1	30	14		14			2	2	անգլ, ֆր. և գերմ
2	Կրթության հոգեբանություն	1	30	14	6		8		2	2	հոգ.
2	Համակարգչից օգտվելու հմտություններ	1	30	14	4			10	2	2	ինֆ.
3	Mathematica կոմպյուտորային համակարգը	1	30	12	4			8	2	2	բարձ. մաթ.
4	Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն	1	30	14					2	2	փիլ.
5	Մասնագ. քննորովի դասընթաց-3	3	90	30					2	2	
6	Մասնագ. քննորովի դասընթաց-4								2	2	
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		8									
5-րդ կիսամյակ											
1	Նախագծերի մշակում և կառավարում	1	30	14	6	8			2	2	տնտ.
2	Համակարգչից օգտվելու հմտություններ	1	30	14	4			10	2	2	ինֆ.
3	Mathematica կոմպյուտորային համակարգը	1	30	12	4			8	2	2	բարձ. մաթ.
4	Հետազոտական պրակտիկա	2									
5	Որակավորման ստուգարք ինֆորմատիկայից	1									
6	Որակավորման քննություն փիլիսոփայությունից	1									
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		7									
6-րդ կիսամյակ											
1	Որակավորման քննություն մասնագիտությունից	1									
2	Որակավորման քննություն մասնագիտությունից	1									
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		2									
Ընդամենը ուսումնական կրթամասի կրեդիտներ		45									
Ընդամենը մասնագիտական կրեդիտներ		15									
						-					փոփոխման ենթակա չէ
Մնացածը կարող է փոփոխվել ըստ ասպիրանտի կազմած անհատական պլանի՝ պահպանելով կիսամյակի կրեդիտների միջին թիվը:											
Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ՝											Ա. Մարգարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀԵՌԱԿԱ ԱՍՊԻՐԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

N	Առարկայի անվանումը	Կրեդիտներ	Կրեդիտ - ժամեր	Լսարանային ժամեր	Դասախոսություն	Գործնական	Մեմինար պարապմունքներ	Լաբորատոր աշխատանք	Անհատական աշխատանք	Ստուգաթղթ	Քննություն	Սպասարկող ամբիոն	Նշումներ
1-ին կիսամյակ													
1	Օտար լեզու	1	30	14		14			2	2		անգլ, ֆր. և գերմ.	
2	Գիտական թարգմանության տեսական և պրակտիկ հարցեր	1	30	14	6	8			2	2		ռուս. լ.	
3	Համեմատական մանկավարժություն	1	30	14	6	4	4		2		2	մանկ.	
4	Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և գործիքակազմ	1	30	14	6	8			2		2	հ.լ.	
	6				8			2		2	հ.լ.		
5	Գիտական գրագրություն և աշխատանքների ձևակերպում (ընտրովի)	1	30	14	6	8			2		2	հ.լ.	
	6				8			2		2	հ.լ.		
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		5											
2-րդ կիսամյակ													
1	Օտար լեզու	1	30	14		14			2	2		անգլ, ֆր. և գերմ.	
2	Համեմատական մանկավարժություն	1	30	14	6	4	4		2		2	մանկ	
3	Գիտական թարգմանության տեսական և պրակտիկ հարցեր	1	30	14	6	8			2		2	ռուս. լ.	
4	Կարիերայի կառավ. և աշխատանքի որոնման մեթոդներ (ընտրովի)	1	30	14	6	8			2		2	տնտ.	
	6				8			2		2	տնտ.		
5	Մասնագ. պարտադիր դասընթաց – 1	3	90	30					2		2	մասն.	
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		7											
3-րդ կիսամյակ													
1	Ակադեմիական գրագրություն օտար լեզուներով	1	30	14		14			2	2		անգլ, ֆր. և գերմ.	
2	Կրթության հոգեբանություն	1	30	14	6		8		2		2	հոգ.	
3	Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն	1	30	14	6		8		2	2		փիլ.	

4	Բնտելեկտուալ սեփականության իրավունք և պատենագիտություն	1	30	14	6	8	2	2	պատմ. և իրավ.	
5	Մասնագ. պարտադիր դասընթաց -2	3	90	30			2	2	մասն.	
6	Որակավորման քննություն օտար լեզվից	1								
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		8								
4-րդ կիսամյակ										
1	Անկադեմիական գրագրություն օտար լեզուներով	1	30	14		14		2	2	անգլ, ֆր. և գերմ.
2	Կրթության հոգեբանություն	1	30	14	6	8		2	2	հոգ.
2	Համակարգչից օգտվելու հմտություններ	1	30	14	4		10	2	2	ինֆ.
3	Mathematica կոմպյուտրային համակարգը	1	30	12	4		8	2	2	բարձ. մաթ.
4	Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն	1	30	14	6	8		2	2	փիլ.
5	Մասնագ. պարտադիր դասընթաց-3	3	90	30				2	2	
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		8								
5-րդ կիսամյակ										
1	Նախագծերի մշակում և կառավարում	1	30	14	6	8		2	2	տնտ.
2	Համակարգչից օգտվելու հմտություններ	1	30	14	4		10	2	2	ինֆ.
3	Mathematica կոմպյուտրային համակարգը	1	30	12	4		8	2	2	բարձ. մաթ.
4	Մասնագ. ընտրովի դասընթաց-1	3	90	30				2	2	մասն.
5	Մասնագ. ընտրովի դասընթաց-2							2	2	
6	Մանկավարժական պրակտիկա	2								
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		8								
6-րդ կիսամյակ										
1	Մասնագ. ընտրովի դասընթաց-3	3	90	30				2	2	մասն.
2	Մասնագ. ընտրովի դասընթաց-4							2	2	
3	Մանկավարժական պրակտիկա	2								
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		5								
7-րդ կիսամյակ										
1	Հետազոտական պրակտիկա	2								
2	Որակավորման ստուգարք ինֆորմատիկայից	1								
3	Որակավորման քննություն փիլիսոփայությունից	1								
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		4								
8-րդ կիսամյակ										
1	Որակավորման քննություն մասնագիտությունից	1								
2	Որակավորման քննություն մասնագիտությունից	1								
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		2								
Ընդամենը ուսումնական կրթամասի կրեդիտներ		45								
										փոփոխման ենթակա չէ
Մտացածր կարող է փոփոխվել ըստ առաջիկանտի կազմած անհատական պլանի՝ պահպանելով կիսամյակի կրեդիտների միջին թիվը:										
Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ՝										
Ա. Սարգսյան										

Հաստատում եմ՝

ԳՊՄԻ ռեկտոր՝

Վ. Գրիգորյան

20 փետրվարի 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՑՈՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

N	Առարկայի անվանումը	Կրեդիտներ	Կրեդիտ - ժամեր	Լատիներեն ժամեր	Դասախոսություն	Գործնական	Սեմինար	Կարգավորումներ	Լաբորատոր աշխատանք	Անհատական աշխատանք	Ստուգաթիվ	Քննություն	Այլառարկող ամբիոն	Եզրամներ
1-ին կիսամյակ														
1	Օտար լեզու	1	30	14		14				2	2		անգլ, ֆր. և գերմ.	
2	Գիտական թարգմանության տեսական և պրակտիկ հարցեր	1	30	14	6	8				2	2		ռուս. լ.	
3	Համեմատական մանկավարժություն	1	30	14	6	4	4			2		2	մանկ	
4	Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և գործիքակազմ	1	30	14	6	8				2		2	հ.լ.	
	Հետազոտական աշխատանքների կազմակերպում				6	8			2		2	հ.լ.		
5	Գիտական գրագրություն և աշխատանքների ձևակերպում	1	30	14	6	8				2		2	հ.լ.	
	Գործարար գրագրություն և հաղորդակցման կարողություններ				6	8			2		2	հ.լ.		
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		5												
2-րդ կիսամյակ														
1	Օտար լեզու	1	30	14		14				2	2		անգլ, ֆր. և գերմ.	
2	Համեմատական մանկավարժություն	1	30	14	6	4	4			2		2	մանկ	
3	Գիտական թարգմանության տեսական և պրակտիկ հարցեր	1	30	14	6	8				2		2	ռուս. լ.	
4	Կարիերայի կառավ. և աշխատանքի որոնման մեթոդներ	1	30	14	6	8				2		2	տնտ.	
	Մարդկային և կուլթական ռեսուրսների կառավ. և դեկ.				6	8			2		2	տնտ.		
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		4												
3-րդ կիսամյակ														
1	Ակադեմիական գրագրություն օտար լեզուներով	1	30	14		14				2	2		անգլ, ֆր. և գերմ.	
2	Կրթության հոգեբանություն	1	30	14	6		8			2		2	հոգ.	
3	Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն	1	30	14	6		8			2	2		փիլ.	
4	Ինտելեկտուալ սեփականության իրավունք և պատենազիտություն	1	30	14	6		8			2	2		պատմ. և իրավ.	
5	Մասնագ. պարտադիր դասընթաց -1	3	90	30						2		2	մասն.	
Ընդամենը կիսամյակային կրեդիտներ		7												
4-րդ կիսամյակ														
1	Ակադեմիական գրագրություն օտար լեզուներով	1	30	14		14				2	2		անգլ, ֆր. և գերմ.	
2	Կրթության հոգեբանություն	1	30	14	6		8			2		2	հոգ.	

2	Համակարգչից օգտվելու հմտություններ	1	30	14	4			10	2	2	ինֆ.
3	Mathematica կոմպյուտորային համակարգը	1	30	12	4			8	2	2	բարձ. մաթ.
4	Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն	1	30	14	6		8		2	2	փիլ.
5	Մասնագ. պարտադիր դասընթաց-2	3	90	30					2	2	մասն.
	Ընդամենը կիսամյակային կրեդիտներ	8									
	5-րդ կիսամյակ										
1	Նախագծերի մշակում և կառավարում	1	30	14	6		8		2	2	տնտ.
2	Համակարգչից օգտվելու հմտություններ	1	30	14	4			10	2		ինֆ.
3	Mathematica կոմպյուտորային համակարգը	1	30	12	4			8	2		բարձ. մաթ.
4	Մասնագ. պարտադիր դասընթաց – 3	3	90	30							2 մասն.
5	Որակավորման քննություն օտար լեզվից	1									
	Ընդամենը կիսամյակային կրեդիտներ	7									
	6-րդ կիսամյակ										
1	Մասնագ. ընտրովի դասընթաց-1	3	90	30					2	2	մասն.
2	Մասնագ. ընտրովի դասընթաց-2										
3	Մանկավարժական պրակտիկա	2									
	Ընդամենը կիսամյակային կրեդիտներ	5									
	7-րդ կիսամյակ										
1	Մասնագ. ընտրովի դասընթաց-3	3	90						2	2	մասն.
2	Մասնագ. ընտրովի դասընթաց-4										
	Ընդամենը կիսամյակային կրեդիտներ	3									
	8-րդ կիսամյակ										
1	Հետազոտական պրակտիկա	2									
2	Որակավորման ստուգարք ինֆորմատիկայից	1									
	Ընդամենը կիսամյակային կրեդիտներ	3									
	9-րդ կիսամյակ										
1	Թիմային աշխատանքի պրակտիկում	2									
2	Որակավորման քննություն փիլիսոփայությունից	1									
	Ընդամենը կիսամյակային կրեդիտներ	3									
	10-րդ կիսամյակ										
1	Որակավորման քննություն մասնագիտությունից	1									
2	Որակավորման քննություն մասնագիտությունից	1									
	Ընդամենը կիսամյակային կրեդիտներ	2									
	Ընդամենը ուսումնական կրթամասի կրեդիտներ	45									
	Ընդամենը մասնագիտական կրեդիտներ	15									
			-								փոփոխման ենթակա չէ
	Մնացածը կարող է փոփոխվել ըստ հայցորդի կազմած անհատական պլանի՝ պահպանելով կիսամյակի կրեդիտների միջին թիվը:										
	Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ՝										
	Ա. Մարգարյան										

ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Աղյուսակ 1. Հետազոտողի ծրագրում տարբերակված գնահատման սանդղակը ընդհանուր պատրաստվածության առարկաների համար

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 100 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՏԱՌԱՅԻՆ ՀԱՄԱՐԺԵՔԸ
գերազանց =5	97-100	A+
գերազանց = 5	93-96	A
գերազանց = 5-	89-92	A-
լավ = 4+	85-88	B+
լավ = 4	81-84	B
լավ = 4-	77-80	B-
բավարար = 3+	73-76	C+
բավարար = 3	69-72	C
բավարար = 3-	60-68	C-
անբավարար	մինչև 59 (առանց կլորացման)	D

Աղյուսակ 2. Հետազոտողի ծրագրում տարբերակված գնահատման սանդղակը մասնագիտական պատրաստվածության առարկաների համար

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 100 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՏԱՌԱՅԻՆ ՀԱՄԱՐԺԵՔԸ
գերազանց =5	97-100	A+
գերազանց = 5	93-96	A
գերազանց = 5-	89-92	A-
լավ = 4+	85-88	B+
լավ = 4	81-84	B
անբավարար	մինչև 80 (առանց կլորացման)	D

Աղյուսակ 3. Ստուգարքով գնահատման սանդղակը ընդհանուր պատրաստվածության առարկաների համար

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 100 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՏԱՌԱՅԻՆ ՀԱՄԱՐԺԵՔԸ
Ստուգված	60-100	S
Չստուգված	մինչև 59 (առանց կլորացման)	U

Աղյուսակ 4. Ստուգարքով գնահատման սանդղակը մասնագիտական պատրաստվածության առարկաների համար

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 100 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՏԱՌԱՅԻՆ ՀԱՄԱՐԺԵՔԸ
Ստուգված	81-100	S
Չստուգված	մինչև 80 (առանց կլորացման)	U

Աղյուսակ 5. Պրակտիկաների գնահատման գործոնները և կշիռները

	ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ	ԿՇԻՌԸ
1.	Հաճախումներ	30
2.	ղեկավարի գնահատական	30
3.	պրակտիկայի հաշվետվության պաշտպանություն	40

ԳՊՄԻ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Ամբիոն՝

Ղեկավար՝

Ասպիրանտի/հայցորդի անուն ազգանուն՝

N	Ուսումնական դասընթացների, հետազոտական աշխատանքների և պրակտիկաների անվանումները	Կրեդիտներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
	ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	47										
	ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԿՐԹԱՄԱՍ	13										
1	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)	2	1	1								
2	Գիտական թարգմանության տեսական և պրակտիկ հարցեր (ռուսերեն)	2	1	1								
3	Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն	2			1	1						
4	Համեմատական մանկավարժություն	2	1	1								
5	Կրթության հոգեբանություն	2			1	1						
6	Ակադեմիական գրագրություն օտար լեզուներով	2			1	1						
7	Գործարար գրագրություն և հաղորդակցման կարողություններ	1	1									
	Գիտական գրագրություն և աշխատանքների ձևակերպում											
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՄԱՍ	8										
1	Mathematica կոմպյուտորային համակարգը	2				1	1					
2	Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և գործիքակազմ	1	1									
	Հետազոտական աշխատանքների կազմակերպում											
3	Նախագծերի մշակում և կառավարում	1					1					
4	Կարիերայի կառավարում և աշխատանքի որոնման մեթոդներ	1		1								
	Մարդկային և նյութական ռեսուրսների կառավ. և ղեկավարում											
5	Ինտելեկտուալ սեփականության իրավունք և պատենագիտություն	1			1							
6	Համակարգչից օգտվելու հմտություններ	2				1	1					

	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՄԱՍ	15											
1	Մասնագիտական պարտադիր դասընթաց – 1	3											
2	Մասնագիտական պարտադիր դասընթաց – 2	3											
3	Մասնագիտական պարտադիր դասընթաց – 3	3											
4	Մասնագիտական ընտրովի դասընթաց – 1	3											
5	Մասնագիտական ընտրովի դասընթաց – 2												
6	Մասնագիտական ընտրովի դասընթաց – 3	3											
7	Մասնագիտական ընտրովի դասընթաց – 4												
	ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ	6											
1	Մանկավարժական պրակտիկա	3											
2	Հետազոտական պրակտիկա	3											
	ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄՆԵՐ	5											
1	Որակավորման քննություն փիլիսոփայությունից	1											
2	Որակավորման քննություն օտար լեզվից	1											
3	Որակավորման ստուգաբք ինֆորմատիկայից	1											
4	Որակավորման քննություն մասնագիտությունից (առնվազն 2 քնն.)	2											
	ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	135											
1	Գիտական սեմինարներ և աշխատաժողովներ	10											
2	Գիտահետազոտական աշխատանք և ատենախոսության կատարում	120											
3	Եզրափակիչ ատեստավորում	5											
	ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ՝	180											

Ասպիրանտ/ հայցորդ՝

Գիտական ղեկավար՝

